կոչի Ազիսուն[1], եւ ի[2] միւս լեառն՝ կոչի Բեմադա[յ]։ 208 Եւ [ունի [այլ] քաղաքս բազումս, յորոց մինն[3] է Ուռհա[յ], ուր անձեռագործ պատկերն է Փրկչին։

209 Եւ][4] Եփրատ բաժանէ ի Միջագետաց զԱսորիս եւ զԱնապատն Արաբիա եւ զԲաբիլաց[ւ]ոց[5] աշխարհդ[6]։ 210 Եւ Տիգրիս երթալով ընդ հարաւ՝ պատահէ լերինն. եւ հարաւով[7] ի դառնալ յարեւելս կոյս՝ բաժանե[ա]լ[8] ի Միջագետաց թողու զհիւսիւսեաւ[9] զԱղձնիս Հա[յ]ոց, որ է Արձն, յորում՝ քաղաք Կուտեմռան, որ է Քղ[ի]մար[10], եւ Քիշ եւ Շուկառաբա[յ]։ 211 Եւ ամենայն քամ ի[11] լերանց Հա[յ]ոց ի Դկղաթ[12] իջանէ, նախ՝ Քաղիրթ, որ բղխէ ի լերանց Սալնա[յ] եւ Սանասնո[յ][13], եւ իջեալ կտրէ յիրերաց զՆփրկեր[տ][14] եւ զՔղիմար, որով բաժանեցան Հոռոմք եւ Պարսիկք, եւ կոչի այժմն[15] Շիթիթմա[յ], որ է՝ «արիւնարբու»։ [30բ] 212 Եւ Դկղաթ[16] երթա[յ] ընդ Նինուէ[17]. եւ պատահէ նախ քաղաքիկ մի, որ կոչի Բղաթ, որ կոչի «թուք», զի անդ ասեն թքանել զՅունան։ 213 Եւ է երկու[18] աշխարհ ընդ մէջ Դկղաթա[յ][19] եւ Եփրատա[յ]՝ նորշէն[20] ի Պարսից. Կաւատ եւ Կաշ[կ]ար[21]։ 214 Եւ է Միջագետք ութ[22] մաս[ն][23] երկայն եւ երեք[24]՝ լայն։

215 ԼԲ.[25] Աշխարհ Բաբիլաց[ւ]ոցն[26], յերի Միջագետաց՝ առ Դկղաթաւ[27], մինչեւ ցՊարսկա[յ]ին[28] ծոցն։ 216 Սահմանի յարեւելից Խուժաստանաւք, իսկ ի հիւսիսո[յ] եւ յարեւմտից՝ Եփրատաւ[29] եւ մասամբ ինչ Անապատ Արաբեաւ։ 217 Ունի [աշխարհս չորս՝ զԱկոդա, զԲծրա[30], զԲաբելոն, զՏիսբոն[31]։ 218 Ունի][32] փոքր աշխարհ՝ զԱւառինտիա եւ զԱմառդոկէ եւ զՈտտոփէ

1 V ազիսուն փխ Ազիսուն (վեր. Սուքրեանի. ըստ Երեմ.՝ վեր-լի է Ազիմուն. տե՛ս բոլորագիր ա → ս)
2 S չիք ի (V)
3 DPv մի փխ միննն (AE. հմմտ. նախ. Գ.62, 68, Դ.16, 21, Ե.88, 230 եւն)
4 VS չիք ունի [այլ] ... Փրկչին: Եւ (3 տող) (վեր. Երեմեանի (1963)՝ ըստ համառօտի, որի բնագրի սկիզբը՝ «Եւ (AE չիք Եւ) ունի լերունս երկու, եւ գետս երկու եւ քաղաքս բազումս...». տե՛ս Եւ ... Եւ)
5 VS զԲաբիլացոց փխ զԲաբիլաց[ւ]ոց (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)
6 S աշխարհ փխ աշխարհդ (V. գրուած է պատուոյ նշանի տակ պլիքաձեւ գաղափարագիր եւ դ)
7 V հարաւ որ, S [ի] հարաւոյ փխ հարաւով (վեր., այլ տարբերակով ստիպուած պիտի լինենք գրչի վրիպած բառեր ենթադրել «եւ հարաւ, որ»-ից առաջ. Սուքրեանի ծանօթագրութիւնն է՝ «Յօր. եւ հարաւ որ»)
8 VS բաժանել փխ բաժանե[ա]լ (վեր., ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է «բաժանել [զՄեծ Հայս]»)
9 VS զհիւսիւսեաւ փխ զհիւսիսեաւ (վեր.)
10 VS Քղմար փխ Քղ[ի]մար (վեր.՝ ըստ յաջորդների, տե՛ս 4 տող յետոյ եւ «Մղոնաչափք»-ում՝ Զ.16)
11 VS քամի փխ քամ ի (վեր. Երեմ-նի, 1963, էջ 114)
12 VS Դկլաթ փխ Դկղաթ (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.130, 212)
13 V Սանաննո փխ Սանասնոյ (վեր. Սուքրեանի. տե՛ս ուշ երկաթագիր Ս → Ն)
14 V յերիրաց զՆփրկեր փխ յիրերաց զՆփրկերտ (վեր. Սուքրեանի)
15 S այժմ փխ այժմն (V)
16 S Դկլաթ փխ Դկղաթ (V. հմմտ. նախ. Ե.130, 212. նոյն դ-ով է նաեւ՝ համառօտում)
17 Ըստ Երեմեանի՝ վեր-լի է «[Ասորեստան եւ քաղաքն] Նինուէ». V-ի լուսանցքում ուշ ձեռքով, երկար պատուոյ նշանների մէջ (ստորինը՝ ոլորազարդով) «ծանօթագրուած» է 2 տող. «Աշխարհ նին/ուէ» (առաջին բառը՝ գաղափարագիրն է)
18 V բ̅
19 VS Դկլաթա[յ] փխ Դկղաթա[յ] (վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ե.130, 212)
20 S նորաշէն փխ նորշէն (V)
21 VS Կաշար փխ Կաշկար (վեր. Երեմեանի, 1963)
22 V ը̅
23 V մաս փխ մաս[ն] (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս, օր.՝ նախ. Ա.18, 25, 27, Բ.5, 6, Ե.57 եւն)
24 V գ̅
25 V ի̅թ̅, S ԻԷ. փխ ԼԲ. (վեր.՝ ըստ համառօտի)
26 VS Բաբիլացոցն փխ Բաբիլաց[ւ]ոցն (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)
27 VS Դկլաթաւ փխ Դկղաթաւ (վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ե.130, 212)
28 V ցՊարակաին փխ ցՊարսկա[յ]ին (վեր. Սուքրեանի. տե՛ս բոլորագիր րս → րա. հմմտ. նախ. Ե.224, 228, 257, 261)
29 VS զԵփրատով փխ զԵփրատաւ (վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ե.190, 191, 213)
30 AE զԲասրա, DPv զՊասրա փխ զԲծրա (վեր.՝ ըստ V-ի. տե՛ս նախ. Ե.256)
31 Pv զՏիսբոն, զԲաբելոն, D զԲաբելոն փխ զԲաբելոն, զՏիսբոն (AE)
32 VS չիք աշխարհս չորս ... զՏիսբոն: Ունի (2 տող) (վեր.՝ ըստ համառօտի, ուր առաջին նախադասութեան սկիզբն է՝ Եւ ունի. տե՛ս Ունի ... Ունի)